Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Աղօթք

իւրաքանչիւր աւուրց

շաբաթու

1856

# ԱՂՕԹՔ
# ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՒՈՒՐՑ
# ՇԱԲԱԹՈՒ

*ասացեալ*

## ՍՐԲՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ
## ԳԱՌՆԵՑՒՈՅ

Ի ՏՓԽԻՍ

1856

79
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀԻՄՆԱԿԱՆ

# ԱՂՕԹՔ

## ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՒՈՒՐՑ ՇԱԲԱԹՈՒ

ասացեալ

## ՍՐԲՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԳԱՌՆԵՑՒՈՅ

ըստ աւուրց արարչութեան աշխարհի։

---

ՏՊԱԳՐԵԱԼ

Ծախիւք Եղիսաւետպօլցի Յովհաննէս ղալի Տէր
Աբրահամեան Տէր Յովհաննէսեանց։

Ի ՏՓԽԻՍ։

Ի Տպարանի Յակոբեայ Արզումանեանց։

1856

**ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ**

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Тифлисъ, 3 Генваря 1856 года.

*Цензоръ И. Кайтмазовъ.*

43
ԳՐԱԴԱՐԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆ 20329

# Աղօթք

## Սրբոյն Յովհաննու Գառնեցւոյ

ա ս ա ց ե ա լ

վասն միաշաբաթի (Կիրակի) աւուր ։

Լոյս աշխարհի և ճառագայթ իմանալի տէր իմ յս̃ քս̃, որ յայսմ աւուր ստեղծեր զլոյսն և հալածեցեր զխաւարն ․ լուսաւորեա զխաւարեալ խորհուրդս և զմթով ծածկեալ միտս ․ բա՛ց զաւկղածեալ առագաստ զգայարանիս ․ և ծագեա առ ծառայս անխափան զշոյլ ճառագայթից քոց ։ Փառք անսպառ՛ որ փարէիր 'ի վեր անհուն համասփիւռ ջրոյն՝ փայլեցո՛ առ փանաքիս զխաւարս լոյդ սրբարար ․ մաքրեա 'ի մեղաց զբազմամեղս և սրբեա անսահմա՛ն տէր իմ և ա̃ծ իմ ․ որ յայսմ աւուր կոչեցեր զլոյսն տիւ և զխաւարն գիշեր ․ զգիշեր մեղաց իմոց և զխաւար անօրէնութե̃ իմոյ հերքեա և հեռացո՛ յինէն ։ Այլ դու տ̃ր գթած և մարդասէր որ յառաջ քան զլինելն երկնի և երկրի, պատրաստեցեր զարքայութի̃ն 'ի սկզբանէ սր̃ց քոց ․ արա՛ և զիս արժանի ընդ նոսին փառաւորել զամե̃նազօր տէրութիւնդ յաւիտեանս յաւիտենից ամէն ։

ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ...
ՓԱՆԴ...

Նոյն աղօթք երկուշաբթի աւուր :

Ով ամենակալ և ամենակարող տէր իմ և Աստուած իմ, որ յայսմ աւուր քո ամենազօր և բարձրագոյն բանիւդ բաժանեալ անջրպետեցեր զբազմութիւն ջուրցն ընդ երկուս. և անշուշտ ամրութբ սահմանեցեր զհաստատութիւն երկնից : Ընկալիր առաջի քո՝ և աղաչեմ զգքեզ, սա՛ բանիւդ այդուիկ առնս, եթէ՝ թողեալ լիցին քեզ մեղք քո բազում. քանզի անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ. և բազմութի յանցանաց իմոց ծանրացան զիս. չէ՛ք չար 'ի չարեաց չարասիրիս, և ո՛չ գոյ թիւ թաղձեալ անօրէնիս. մեկնեա՛ յինէն զյանցանս իմ տէր, և անջրպետեալ զերայս՛ զմեղս զերաւորեալ ծառայիս. արա՛ արժանի զանակնկալն ծառայս երկնից արքայութեան ընդ ամ սուրբս քո. զի ընդ նոսին փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին. ամէն:

Նոյն աղօթք երեքշաբթի աւուր :

Ա երկնի վայելչութեանցդ վերանորոգ, և սորայնոցս ստեղծող տէր իմ և Աստուած իմ. որ յայսմ աւուր հրամայեցեր անբաւութեան ջրոյն ժողովել 'ի ժողովս իւրեանց. յորում երևեցաւ ցամաքն համօրէն ընդերբողբոջ բուսովք և տնկովք և ամ բարի պտղովք յազգս իւրեանց : Ընկալիր առաջի քո և խնդրեմ 'ի քէն թարշամեալքս 'ի հոգւոյ ծաղկայն. և անպտուղս 'ի բարի արդեանցն. հայեա՛ց 'ի ստեղծուածս անմեղ մատանեցդ, և զգործս անարատ ձեռացդ մի՛ անտես առներ. այլ նախախնամական սիրովդ՝ խնայեա՛ 'ի խախտեալս

և 'ի տարակուսանաց մերոց · զի նետք նենգաւորին խոցոտեցին զմեզ , և հարան յիս փուշք բանսարկուին, մերաւորեաց զմեզ մեղսալից ախտալին · և թոյնք մահաբերք գազանին թափեցան 'ի մէջ իմ · չէ՛ ուստեք փրկութի՛ և ո՛չ դեղ բժշկութի՛ հոգւոյ իմոյ : Արդ՝ հայցեմ ամենամեղս յամենազօր տէրութենէդ բժշկեա՛ զբեկեալ սիրտս , և պատեա՛ մարդասէր տէ՛ր զվարբեվէրս · և այժմ այսօր որոշեցեր զջուրս 'ի ցամաքէն, նոյնպէս որոշեա՛ յինէն զամ անօրէնութի՛ս իմ, և արժանի արա՛ երկնից արքայութեանդ ընդ ամենայն սրբս քո · փառաւորեմ զամենազօր տէրութի՛դ · այժմ և միշտ և յա՛":

Նորին աղօթք չորեքշաբաթին աւուր :

Անկանիմ առաջի քո և աղաչեմ զքեզ տէ՛ր իմ և ա՛ծ իմ · անճառ ճառագայթ · և անհասանելի լոյս՝ և լուսեղինաց դասուցդ յօրինիչ, և լուսաւորացդ երկնից ստեղծող երրորդութի՛ սուրբ · որ յայսմ աւուր գոյացուցեր զարեգակն և զլուսինն և զաստեղս · և եդեր զնոսա 'ի հաստատութեան երկնից լուսաւորել զարարածս , և ցուցանել զժամս և զժամանակս՝ զաւուրս և զտարիս · և արդ՝ ես խաւարեալս 'ի լուսոյ և ծածկեալս խաւարաւ մեղաց , հայցեմ յամենալոյս ողորմութենէդ, որպէս լուսաւորացդ շնորհեցեր լոյս՝ շնորհեա՛ ինձ յառատ և յանհամեմատ լուսոյդ, փոքր մի մասն և բաժին · և փարատեա՛ յինէն զմէգ և զխաւար յանցանաց · և անանց լուսոյդ առաջնորդեա՛ ինձ յարքայութի՛նդ ընդ ա՛մ սրբս · փառաւորեմ զամենազօր տէրութի՛դ հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ · այժմ և'':

Նորին աղօթք հինգշաբթին աւուր :

Արարող եւ ներգործող բարեաց բազմագութ եւ ողորմած տէր իմ եւ Աստուած իմ. որ յայսմ աւուր հրամայեցեր ջրոյն հանել յիւրենէ զշունչս զեռնոց, եւ ձկանց ծովու, եւ թռչնոց երկնից. եւ օրհնեցեր զնոսա աճել եւ բազմանալ. եւ մինչեւ ցայսօր եւ առ յապա լնամորկես 'ի վերայ նոցա : Եւ արդ ես բազմամեղս անկեալ աղաչեմ զքեզ բազմագեղ եւ ամենագութ տէր՝ մի՛ անտես առներ զմեղաւորս 'ի պահպանութենէդ քումմէ՝ եւ մի՛ մերժեր զանձս 'ի պարգեւաց քոց. այլ ցոյց ինձ զողորմութիւն քո եւ արա առ իս նշան բարի. բարձ զբեռինս բարկացուցանողին՝ եւ ազատեա զպատառեալս 'ի տաւանց մեղաց. մի՛ բարկանար ինձ տէր վասն բազում անօրէնութեան իմոյ, եւ մի՛ դատապարտեր զդառնացուցիչս վասն անուան քում սրբոյ. այլ տուր ձեռն անօրինեցելոյս եւ հան 'ի խորոց անդնդոց զխորտակեալս մեղօք. մաքրեա յաղտոյ մեղաց՝ եւ ազատեա 'ի խղճէ մտաց զբազմաբիծս, զորդիս կորստեան արա որդիս լուսոյ. եւ զհեռացեալս յարդարութենէ հուպ արա մերձաւորաց քոց սրբոց եւ սիրելեաց. զի ընդ նոսին մտեալ 'ի մշտնջենաւոր հանգիստն փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն :

Նորին աղօթք ուրբաթի աւուր :

Ստեղծող բարի եւ ամենակարող զօրութիւն տէր իմ եւ Աստուած իմ. որ յայսմ աւուր հրամայեցեր երկրի հանել յիւրմէ զգազանս եւ զանասունս, եւ զսողունս, եւ զչորքոտանիս

յաղգս խուրեանց · զհայրենիս և զընտանիս · և յայսմ աւուր արարեր զմարդն անձնիշխան · և կացուցեր զնա տէր և իշխան 'ի վերայ ամենայն ձեռակերտաց քոց · և եդեր զնա 'ի դրախտին փափկութե, պահել զպատուէրն · բայց իմ է պատուիրանազանցութիւն նախահօրն՝ որով արտաքսեցաք 'ի պայծառ պատուոյն և 'ի փափուկ փառացն։ Մանաւանդ զի նա միանգամ խաբեցաւ փոքր և թեթև յանցմամբ · իսկ ես անթիւ և մեծամեծ յանցանօք մեղանչեմ անդադար, ուստի և մեք պարտաւորեցելոյս, բարձրացար յայսմ աւուր բանդ ած 'ի վերայ խաչին ։ Եւ արդ՝ աղաչեմ զքեզ երկրպագանելս և անոխակալ տէր իմ և ած իմ · ողորմեա ինձ ողորմեցելոյս և մեղօք լցելոյս · մի՛ ընդ վայր հարկաներ զպատկերս յոր փչեցեր · և մի՛ մատներ յաւիտենից տանջանացն, զոր ստեղծեր · զի քո եմ տէր և 'ի քեզ յուսամ · և 'ի քէն այն ունիմ արձակիլ 'ի կապոց յանցանացս · ուստի և հանդիպեցուցես զիս տէր թողութե մեղաց և քաւութե յանցանաց · և մասնակից արասցես զելեալս արանց արդարոց՝ և 'ի սկզբանէ ընտրելոցն · զի ընդ նոսին հանգեալ փառաւորեցից զամենազօր տէրութիւն զհայր և զորդի և զսուրբ հոգին · այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն ։

Նորին աղօթք շաբաթի աւուր ։

Սուրբ երրորդութի՛ անբաժանելի, անձառելի, և անաշխատ · որ յայսմ աւուր հանգեար յամ գործոց քոց, զոր սկսար առնել և կատարել · որ նշանակեաց հանգիստն զթաղումն ածցեալ մարմնոյդ · որ աշխատեցար

բազկատարած բեւեռմամբդ 'ի մր կենսաբեր սբ խաչին : Դու որդ ահմ ես ամենամեղս անկեալ աղաչեմ զքեզ որ կամ և եծ կամ յս 'քս. և խնդրեմ մի փառաց երեսաց Հօրդ լուսոյ, և վասն փառակցուե Հոգւոյդ սրբոյ, և մի կամաւոր չարչարանաց քոց, և վասն կենդանարարին փայտին և սբ բեւեռացն, և վասն Հեղման քքմառեալ աղատաբար սբ արեանդ, և վասն երեքօրեայ թաղմանն և Հրաշալի յարութեանն, և վասն կուսական կաթինն մարմնաւ սբյ ծծանելն, և վասն սիրոյ և բարեխօսուե ամ սբյ քոյ, երկնաւորաց և երկրաւորաց, որքեմ զիս յամ մեղաց իմոց՝ և ազատեմ 'ի դատն մշտաց դեՀենին. և արժանի արա զանպիտան ծառայս խոստայել բարեացն ընդ ամ սբս քո. զի ընդ նոսին Հանգուցեալ փառաւորեցից զՀայր և զորդի և զսուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն.



ԳՐԱԴԱՐԱՆ

Ա - 49



Գ-ին աշխարհագրին . . . . . 13 ղուշ. արծ.

79
Ц - 49